Ուժի մեջ է 2020թ. հուլիսի 24-ից

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Գլխավոր գործադիր տնօրեն

*Հ. Անդրեասյան*_____

22 հուլիսի 2020թ.

1. Սույնով սահմանվում են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերությունում (այսուհետ՝ Բանկ) թղթակցային հաշիվների բացման, վարման և փակման դիմաց գանձվող սակագները և միջնորդավճարները (այսուհետ՝ Սակագներ):
2. Սույն սակագների ձևավորման հիմքում ընկած են միջազգային բանկային պրակտիկայում ծառայությունների մատուցման գոյություն ունեցող հիմնադրույթները:
3. Սույն սակագները կարող են Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ այդ մասին նախապես Բանկի ինտերնետային կայքում և/կամ այլ հրապարակային աղբյուրներում տեղադրելով:
4. Թղթակից բանկի կողմից որոշակի ծառայության համար սահմանված տիպային փաստաթղթի կամ պայմանագրի ստորագրումը հաստատում է սույն սակագների, ինչպես նաև Բանկի կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին պայմանների և կանոնների ընդունումը:
5. Սույն սակագներով ուղղակի չնախատեսված, սակայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների, գործառնությունների ու գործարքների պայմանները սահմանվում են Բանկի և թղթակից բանկի միջև կնքված պայմանագրով և/կամ Բանկի այլ սակագներով:
6. Առանձին դեպքերում, հաշվի առնելով թղթակից բանկի՝ Բանկում ունեցած դրամական հոսքերի չափը, հաշիվների մնացորդները, գործարար համբավը, Բանկի հետ համագործակցության ժամանակահատվածը, կարող են առաջարկվել սույն սակագներից արտոնյալ պայմաններով (ոչ ստանդարտ) Սակագներ:
7. Մատուցված ծառայությունների համար սույն սակագներում նշված միջնորդավճարները Բանկի կողմից միակողմանիորեն (անակցեպտ) կարող են գանձվել թղթակից բանկի հաշվից, եթե այլ բան սահմանված չէ թղթակից բանկի հետ կնքված պայմանագրով:
8. Բանկը պատասխանատու չէ անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, պետական մարմինների ակտեր, գործադուլ, քաղաքացիական հուզումներ, շրջափակումներ, հեռահաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, արտակարգ այլ հանգամանքներ) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:
9. Բանկը հաճախորդներին ծառայություններ է մատուցում աշխատանքային օրերին[1]՝ Երևանի ժամանակով ժամը 9:30-18:00, բացառությամբ հետևյալ դեպքերի.
   - մասնաճյուղերի կողմից ծառայությունների դիմաց վճարումների ընդունում և հաշվարկադրամարկղային սպասարկում՝ աշխատանքային օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 9:30-16:30-ը,
   - հեռահար եղանակով, ներառյալ՝ ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքերի (այսուհետ՝ ՖԳԻԱՍ) միջոցով ծառայությունների մատուցում՝ աշխատանքային օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 9:00-18:00,

ինչպես նաև, եթե Բանկի կողմից այլ բան սահմանված չէ առանձին ծառայությունները կարգավորող պայմաններում, պայմանագրերում, Բանկի ներքին իրավական ակտերում կամ www.acba.am Բանկի պաշտոնական կայքում:

Բանկի ներքին իրավական ակտերով և/կամ կոնտրագենտների և/կամ Բանկի հաճախորդների հետ կնքված պայմանագրերով որոշակի շրջանակի կամ առանձին ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց և/կամ անհատ ձեռնարկատերերի համար կարող են սահմանվել Սակագներից տարբերվող այլ սակագներ:

[1] Աշխատանքային օրեր՝ երկուշաբթիից ուրբաթ օրերը (բացառությամբ այն օրերի, որոնք ՀՀ օրենսդրությամբ համարվում են/կհամարվեն ոչ աշխատանքային օրեր), ինչպես նաև այն օրերը, որոնք ՀՀ օրենսդրությամբ համարվում են/կհամարվեն աշխատանքային օրեր:

1. Թղթակցային հաշվի բացում, վարում, փակում	անվճար
2. Թղթակցային հաշվի քաղվածքի և վճարային փաստաթղթերի տրամադրում	անվճար
3. Հաշվի նվազագույն մնացորդ	
- ՀՀ դրամ	1,000,000 ՀՀ դրամ
- ՌԴ ռուբլի	100 000 ՌԴ ռուբլի
- ԱՄՆ դոլար	3,000 ԱՄՆ դոլար
- եվրո	3 000 եվրո
4. Հաշվի մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0%
5. Աուդիտորական հարցումներ	
- ռեզիդենտ բանկերին	անվճար
- ոչ ռեզիդենտ բանկերին	5 000 ՀՀ դրամ